

Տ Ա. ՍՈՀԱԿ ՊԱՐԹԵՒ

1. Ընտրութիւն եւ առաջին կեանք:

Ասպուրակէսի մահուանէ ետքը 386 է 387 տար-
ւոյ մը չափ կաթողիկոսական աթոռը դատարկ մնաց-
երկիրը երկու քաղաքական պետ ունէր, ալլ եկեղեց-
ւոյն ալ երկու պետ առաջ չէր, և երկու կողմե-
րուն համամտութիւնը պէտք էր որպէս զի եկեղեցին
միակ հայրապետ մը ունենար՝ բոլոր ազգէն հաւասա-
րապէս հոգեոր գլուխ ճանչցուած: Յանկարծական պա-
տահար մը լուծումը փութացոյց: Արշակ, լունական
բաժնին թագաւորը, մաշարայական ախտիւ մեռաւ, բա-
ժանումէ երկուքուկէս տարի լետոյ (Խոր. 114) 386ին
վերջերը, և Յոյները իրեն յաջորդ թագաւոր մը չդրին,
ալլ կոմս մը անուանեցին իբր կուսակալ, և նախարա-
րական գունդերուն ալ հրամանատար կամ նախարարա-
պետ նշանակեցին Գագաւան Կամսարականը: Խոսրով
մնաց միայնակ ազգալին վեհապետ և կրցաւ ազատօ-
քէն հայրապետական ընտրութիւնը լրացնել, և բովան-
դակ ազգին համակրութեան առարկայ անձ մը բարձ-
րացնել աթոռին վրայ: Սահակ Պարթև, Ներսէս Պար-
թևի որդի, Աթանազինէի թոռ, Յուսիկի թոռնորդի,
Վրթանէսի թոռնեալ, և Լուսաւորչի ձագթոռ, որ է
հինգերորդ ծնունդ, հայրապետ եղաւ Խոսրովու Յ. ըդ
տարին (Խոր. 188), ալսինքն է 387-ին: Խոսրովին հա-
մար մեծ գովեստ և արժանիք է ալսպիսի արժանաւոր
ընտրութեան պատճառ եղած ըլլալ:

Սահակի ծնունդը, ինչպէս լիշեցինք, եղած էր ի
կեսարիա, երբ Ներսէս և Յանդուիստ մանկամարդ ա-
մուսիններ, ի միասին ուսում առնելու համար այնտեղ
կը գտնուէին: Մեք 350-ին Ներսէսը արդէն Կոստան-

դնուպոլիս եկած կը գտնեմք, միւս կողմանէ նաւասարդի 30-ը նշանակուած է իրեւ Սահակալ ծննդեան օր (Խոր. 188, Փրա. 114, Կոր. 25, Սոփ. 28), արդ թէ 349-ի և թէ 348-ի նաւասարդ 30-ը կը հանդիպի սեպտեմբեր 29-ին, և մեզի յարմարագոյն կերւի 348 սեպտեմբեր 29 թուականը ընդունել հաստատապէս իրեւ Սահակալ ծննդեան օրը: Երբ Վարդան Մամիկոնեան վաղամեռիկ դստեր մարմինը Կեսարիալէ Թիլ փոխադրեց, հարկաւ որբ մանկիկն ալ բերաւ ի միասին մայրենի պատրոն տունը. և Մամիկոնեանց մօտ սնաւ ու աճեցաւ Սահակ ու անցուց իւր կենաց առաջին տարիները:

Բնական էր որ Ներսէս հալրապետ մեծ հոգ տանէր իր միածնին կրթութեան, և Սահակ երկար տարիներ դեգերեցաւ Կեսարիա և Բիւզանդիոն, և կատարեալ հելմնական ուսումն ստացաւ. Շնորհ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց, եղեալ կտտարելուպէս հմուտ երգողական տառիցն և հոետորական լորդասաց յալտնաբանութեան, ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր» (Փրա. 47): Հելլենականին հետ չէր պակսէր Սահակալ ասորական ուսումն ալ որ աւելի գործածական էր արեւելեան և հարաւալին նահանգներու մէջ (Խոր. 140), ինչակս և պարսկական լեզուն որ կարեւոր էր քսղաքական յարաբերութեանց համար: Իսկ հայերէն գալրութեանց ոչ թէ լոկ մշակող մը եղաւ, այլ իսկապէս գտիչ և հիմնադիր. և եթէ գրոյն հեղինակը Մեսրոպ եղաւ, գրականութեան հեղինակը Սահակ եղած է: Սահակալ ամուսնութիւնը պէտք չէ ուշացնել: Վարդան իւր թոռը 417 դեսպանութեամբ Կոստանդնուպոլիս կերթալ և ստրատելատի պաշտօն կընդունի (Խոր. 154): Այդ Վարդանը գոնէ 28 տարեկան ենթադըլով և մօրն ալ ծննդեան ատեն իբր 18 տարի տալով, Սահակալ ամուսնութիւնը պէտք կլալ դնել 369-ին, 21 կամ 22 տարեկան եղած ատեն, որ ուշ չէ, նկատելով Ներօէսի ալ սերունդը պահելու համար ունեցած փոլթը: Իսկ Սահակ ինչպէս ամուսնութենէ առաջ, նոյնպէս

ամուսնութենէ ետքն ալ կարող էր ուսում շարունակելու համար արտասահման երթալ:

Սահակի ամուսնոյն ոչ ցեղը գիտեմք և ոչ անունը. որոնք մամին անուն, թոռան վրայ կրինուած ենթադրելով Շուշան կոչեցին Սահակայ ամուսինը, այլ պարզ ենթադրութիւն է. Սահակ միակ աղջիկ զաւակ մը ունեցած է Անոյշ կամ Սահականոյշ անուն. և այդ մեծ մտահոգութիւն պատճառած է իրեն, զի Լուսաւորչայ սերունդը պահելը՝ մեծ մտածմունք մը եղած էր թէ ազգին և թէ նոյն տոհմին, իբր այն թէ Լուսաւորչի սերունդին լարատեսութիւնն Լուսաւորչի եկեղեցւոյն պահպանութեան գրաւականը լինէր (Փրա. 88):

Այդ մտահոգութիւնն էր որ առիթ տուալ Սահակայ նշանաւոր տեսիլքին, զոր ինքն գաղտնի պահեց մինչև իւր կեանքին վերջերը, և այն ատեն ընդարձակօրէն պատմեց նսխարարներուն (Փրա. 87—113). Տեսիլքը եղած է ու մեծ եկեղեցւոյ Վաղարշապատու» (Փրա. 90), որ է Ա. Էջմիածնի կաթուղիկէն, աւագ ուրբաթու հսկման գիշերը։ Մեծի հինգշաբաթու երեկոյեան պատարագին հաղորդուած էր և բերանալուծի աղուհաց, առաջին գու բղաներն ալ ըսուած էին, և ըստ սովորութեան ընթերցուած կը լինէր մինչև գիշերայինի ատենը գայ: Ըսթերցողը, կըսէ Սահակ, կամաւ կերկարէր ընթերցուածը որպէս զի պաշտօնեալք հանգստանալու և ժողովուրդը հաւաքուելու ատեն ունենան. ինքն ալ սեղանի մօտ նստած էր (Փրա. 89): Այդ պարագալք կը ցուցնեն թէ Սահակ պարզ պաշտօնեալ, կամ ըստ լաւմաւուրաց միայն սարկաւագ էր այս տեսիլքին միջոցին, երբ ուսում աւարտելէ լետոյ հալրենիք դարձած և եկեղեցւոյ ծառալութեան մտած էր, միանգամայն երիտասարդական բորբոքմամբ հետամուտ էր արու զաւակի տէր լինել: Ամուսինն ալ կենդանի էր հարկաւ, զի այլազգ փափաքելու ալ տեղի չէր մնար, տարիքն ալ երեսունը նոր անցած ենթադրելով, հնար է 380 ապրիլ 9 աւագ հինգշաբաթիկ վրայ եկող գիշերը՝ տեսիլքին հաւանական թուականը ընդունել:

Տեսիլքին պարունակութիւնը հետևեալն է: Մեծ.

խորան մը ճերմակ կտաւով ծածկուած և վրան լուսաւոր խաչ, խորանին մէկ փեղկը կը բացուի և կը տեսնուի սեղան մը վրան հաց ու ողկուզ, մօտը ձիթենի մը, երեք մեծ և երեք փոքր ոստերով և տարբեր պըտղաբերութեամբ։ Սեղանին միւս կողմը աթոռ մը թուխ կտաւով պատած, և աթոռին վրայ սկտեղի մը մէջ ծալեալ նափորտ մը և ոսկի գունդ մը և մագաղաթ մը, վրան քանի մը տող ոսկեգիր, քանի մը տող ջնջեալ, տողուկէս դարձեալ ոսկեգիր, և ապա կարմրագիր։ Սկտեղին շուրջը մանջ ու աղջիկ տղաքներ։ Նարծ մը կելլէ, աթոռ կը շարժուի և տղալը կերիտասարդանան և կը թեատորուին և գետնէն սեղան և սեղանէ երկինք կը բարձրանան։

Ոմանք ուզեցին տեսիլքը իբր անհարազատ գրութիւն նկատել և իբր եղելութիւններէ լետոյ պատրաստուած գուշակութիւն կարծել, սակայն և ոչ իսկ եղելութեանց հետ ճիշտ համաձայնութիւնն մը հնար է կագմել։ Մեկնութեան մէջ ըսուած է թէ 350 տարիէ անազատի պղծութիւնը պիտի երևի։ Արշակունեաց թագաւորութիւն և Պահանայի ապահովեաց քահանայապետութիւն պիտի նորոգուի, Լուսաւորչաւ նորոգեալ ցեղէ կաթողիկոս մը պիտի մարտիրոսանալ, և ալին, որք բնաւ եղելութեանց մէջ չեն ճշմարտիր, և եղելութեանց վրայ լենուած լինելու նշան չունին։ Այս կողմանէ Սահակյա տեսիլքը շատ տարբեր է ներսէսի տեսիլք կոչուած գրուածքէն։

Սահակայ առաջին կեանքը կը նկարագրուի իբր ճգնողական, բայց ոչ անապատական, այլ «լաշխարհի գոլով» (Սահ. 5): Ունեցաւ ևս վաթսուն աշակերտներ որք իրեն հետ աղօթից և ուսմանց կը պարապէին և աշխարհի պէտքերն ալ կը հոգալին (Խոր. 122): Ասոնք են որք իետ ժամանակաց ասպարէզի վրայ տեսնուեցան գիրի գիւտին ժամանակ, և անկէ առաջ ալ եկեղեցիներու մէջ թարգմանչութեան կարևոր պաշտօնը կը վարէին։

Ոմանք կարծեցին թէ Սահակ ամուսնոյն մեռնեէն ետքը (Զամչ. Ա. 484), և ուրիշներ ենթագրեցին թէ ամուսնէն բաժնուելով (Վարք. Բ. 136), եկեղեցա-

կանութեան նուիրուեցաւ, թէպէտ նախնական աղբերք ոչ մին կը լիշեն և ոչ միւսը: Ներսէս և Յուսիկ ալ կանուխ ալրիացան, գուցէ նոյնպէս դիպեցաւ և Սահակայ, այլ միշտ սարկաւագութենէ և 380-ի տեսիլքէն ետքը. և այն ատեն կրցաւ աշխարհէ ձեռք քաշել և կրօնաւորական հստարակութեան մը գլուխ կանգնել (Խոր. 122): Քահանալութիւնն ալ ստուգիւ Ասպուրակէսէ ստացաւ, թերեւս եսիսկոպոսութիւնն ալ կաթողիկոսութենէ առաջ ստացած էր:

Սահակ ըստ ամենալինի պատրաստ էր աթոռոյն յաջորդութեան Ասպուրակէսի մահուան պահուն, 386-ին, և միայն քաղաքալին պահանջմանց բերմամբ 387-ին աթոռ բարձրացաւ: Յալտնի է թէ ձեռնադրութեան համար Կեսարիա չգնաց, արդէն նախորդ Մանազկերտացիք դադրեցուցեր էին ալդ սովորութիւնը, և եթէ Սահակ արդէն եպիսկոպոս չէր, հարկաւ ազգալին եպիսկոպոսներէ առաւ ձեռնադրութիւնը: Սահակ իբր 40 տարեկան էր հայրապետ եղած ատեն:

2. Առաջին գործունէութիւն.

Խոսրով Սահակաւ ընտրութեամբ քաղաքական նըպատակի ալ ծառալած կերեկ. ոչ միայն Սահակաւ արժանեօք և Լուսաւորչեան սերունդին համակրութեամբ, այլ և յունական շահուց բարեկամ անձի մը ներկայութեամբ լինքն գրաւելով յունական բաժնին ազգայնոց և նոյն իսկ կայսեր համակրութիւնը: Թէոդոս մեծ հաճեցաւ 388-ին որպէս զի Խոսրով յունական բաժնինն ալ կառավարէ յունական օրէնքով և յատուկ հարկով, զի միւս կողմանէ կը վախնար, չըլլալ թէ իւր բաժնին հայերը ուղեն ուղղակի Խոսրովի ձեռքին տակ մտնել և Սահակայ խնամքը վայելել:

Խոսրով կընար ենթադրել թէ Պարսից հաճոյ պիտի լինի յունական բաժնին անուղղակի կերպով իրենց գերիշանութեան ներքեւ անցնելը. ընդ հակառակն Շապուհ Գ. կարծեց թէ Խոսրով կուզէ Պարսից բաժինը Յունաց մօտեցնել (Խոր. 122), և առ այս նպաստեց հալ նախարարներէն ոմանց քսութիւնը (Փրա. 35):

Խոսրով հրաւիրուեցաւ ի Տիգբռն, և նա՝ կամ այն է որ
միամտօրէն գնաց (Փրալ. 36), կամ թէ ընդդիմանալուն
վրայ բռնի տարուեցաւ (Խոր. 124), ստուգ է թէ թա-
գաւորութենէ և ազատութենէ զրկուեցաւ և բանտար-
կուեցաւ թագաւորելուն ճ-րդ տարին (Խոր. 126), այ-
սինքն է 389-ին: Նոյն վճիռը պահ մը Սահակն ալ «վը-
դովեաց ի պատույն» (Խոր. 124), այլ հետևանք չու-
նեցաւ և պաշտօնին վրայ մնաց, և երևի թէ սպառ-
նալիքով մը ամեն բան վերջացաւ:

Խոսրովի գտնչը դատարկ չմնաց: Պարսիկներ զգա-
ցած էին թէ Հայք առանց Արշակունի պետի մնալ չեն
ուզեր, ուստի Վուամ-Կրման հօրը լաջորդելուն պէս թա-
գաւորեցուց Խոսրովու եղբայր Վաղարշը, և անոր պահ-
լաւիկ անունն ալ փոխելով (Արձ. 69), իւր և իւր հօր
անուններուն բարդութեամբ, Վուամ-Շապուհ անուանեց:
Սահակալ կաթողիկոսութիւնն ալ արքունական հաստա-
տութիւն ստացաւ. և արդիւնաւոր գործունէութեան
դուռ բացաւ: Ղւամշապուհ և Սահակ խաղաղ և օգ-
տաւէտ իշխանութիւն վարեցին քառորդ գար մը, և քա-
ղաքական տկարութեան միջոցին գրական ոսկեդարը
Հիմնեցին:

Սահակալ հալրապետական բարեկարգութիւնք սկը-
սան անդստին ալս միջոցին սկիզբէն, բայց որովհետեւ
ամեն լիշտակք որ կան գիրի գիւտէն լետու աւան-
դուռն են մեզ, հետևաբար այստեղ առաջ բերելու
մանրամասնութիւններ կը պակսին: Քաղաքական գոր-
ծառնութեանց մէջ Սահակալ մտսնակցութիւնը աներկ-
բայ է բոլոր եղելութեանց ընթացքէն: Որչափ և լու-
նասէր ուղղութիւնն ալ լայտնի է, և Խոսրովու անկ-
մտմբ հաստատուած, սակալն պէտք է ըսել թէ Սահակ
անկեղծաւոր և ուղղամիտ ընթացքով գիտաց իրաց պա-
հանջքը լարգել, ո զիդ քաղաքականութեամբ գործել,
և նոյն իսկ պարսիկ արքունեաց առջև լարգ-ու վստա-
հութիւն վայելել: Ասոր առաջին նշանը եղաւ իւր փե-
սալին՝ Համազասպ Մամիկոնեանին սպարապետութիւն
ընդունելիս Սպարապետան Սահակ Բագրատունի մեռած
էր Խոսրովի վերջին տարին, լաջորդը չընտրուած ինքն
գահազուրկ էր եղած, իսկ Վուամշապուհ իւրովի գոր-

ծելէ կը քաշուէր: Սպարապետութիւնը Մամիկոնէից
իրաւունքն էր, և Սահակալ աղջիկը, որ հաւանաբար
386-ին Համազասպայ հետ ամուսնացած էր, սաստիկ
կը թախանձէր: Սահակ պարտաւորուեցաւ անձամբ Տիգ-
րոն երթալ:

Սահականոյշ դուստր Սահակայ, որդւոյ Սանդիխտոյ,
դստեր Վարդանոսի, թռունեալ է Վաչէեան Արտաւազ-
դալ, իսկ Համազասպա որդի Մանուէլի, որդւոյ Վասակալ,
թռունորդի է նոյն Արտաւազդոյ, որով Սուհականոյշի և
Համազասպի ազգակցութիւնը կը հասնի եօթներորդ աս-
տիճանի, և բոլորովին աւելորդ կը դառնայ ճիւղահա-
մարի ճշդութեան մասին ոմանց լարուցած խղճահար
կասկածը (Յուշիկը. Ա. 319): Թող որ չորրորդ դարուն
կանոնները վերջին դարերու կոնոններէն նուազ խիստ
էին արս կէտին մէջ:

Սահակալ Տիգբըն երթալուն առաջին շարժառիթն
էր Մամիկոնեանց իրաւունքը և իւր աղջկան թախան-
ձանքը և փեսալին փառաւորութիւնը, աւելցնենք նաև
սպարապետութեան փափուկ պաշտօնին արժանաւոր
ձեռք մը յանձնուելը (Խոր. 128): Բայց Սահակ ուրիշ
գործեր ալ կատարեց: Նախ կարգադրեց և պարզեց
Վուամայ և Վուամշապհոյ լարաբերութիւնները. Պարսից
սրտին ներշնչեց Հայոց վրայ փստահութիւն. ցուցուց
Յունաց բաժնին հետ լաւ լարաբերութիւն պահելուն
մէջ Պարսից արքունեաց օգուտը. կասկածաւոր կամ մե-
դապարտ կարծուած նախարարներուն գործերէն շատերն
ալ կարգադրեց. նախարարական գահնամակը նորոգել
տուաւ. լոգուտ Մամիկոնեանց նպաստաւոր փոփոխու-
թիւն ընդունեցաւ. հաւանաբար Խոսրովու բանտար-
կութեան ալ թողութեան շնորհ ստացաւ. և փառաւոր
լաշողութեամբ իւր աթոռը դարձաւ:

Ալդ գործողութեան թուական կրնամք նշանակել
Վուամշապհոյ երկրորդ տարին, որ է 390: Ասկէ ետքն
է որ Վուամշապուհ համարձակ լարաբերութեանց կսկսի
լունական բաժնին հետ և յատուկ հարկատւութեամբ
առ կալսըն յանձնառու կը լինի նոյն բաժինն ալ կառա-
վարել (Խոր. 132), որ Խոսրովու վրայ յանցանք նկա-
տուած էր: Սահակ ալ նոյն կարգադրութեան շնորհիւ

Համարձակութիւն կունենալ հալրապետական իշխանութիւնը տարածել և զօրացնել լունական բաժնին մէջ:

Յ. Գիրի գիտը:

Սոյն 390 թուականին մինչև 404, որ է գիրի գիւտին տարին, 15 տարւոյ միջոցին մէջ, բնաւ պատմութեան մէջ աւանդուած եղելութիւն չեմք գտներ, բայց եթէ ընդհանուր ճիգ մը եկեղեցական բարեկարգութեան և կրօնական ուսմանց և հաւատալեաց հըմտութեան տարածուելուն համար, որ տակաւ աճելով առիթ կընծալէ հայ գրութեան և գրականութեան հետամուտ լինելու, և որ վերջապէս չնաշխարհիկ լաջողութեամբ կը պատկուի. Այդ լաջողգլութիւնը բովանդակ իսկ ազգային պատմութեան բարձրագոյն կէտն է, այլ մեք զանց կընեմք անոր մանրամասնութեանց մտնել, զի նիւթը մատենագրական պատմութեան լատուկ է, և մեզ բաւական է եկեղեցական պատմութեան պահանջածին չափ ծաղկաքաղ ընել:

Գիրի գիւտին հովանաւորն եղաւ Առամշապուհ, պաշտպանը եղաւ Մահակ, այլ ուղղակի հեղինակն եղաւ Մեսրոպ, որ նոր ասպարէզ կուգալ պատմութեանս մէջ: Մաշթոց Վարդանեան Հացեկացի, Տարօնոյ գաւառէն, Ներսէսի հիմնած վարժարանաց աշակերտ, սոյն հայրապետին մահուան միջոցին մօտը կը գտնուի ի 373, և եթէ գոնէ 2 տարեկան ուզեմք ենթաղրել այն պահուն, 353 ին ատենները ծնած, և Մահակէ 4 կամ 5 տարեկան կրտսեր եղած կը լինի: Ներսէսի մահուանէ ետքը արքունական ծառ ալութեան կը մտնէ (Խոր. 114), և Խոսրովու ժամանակ Վարդանակ լիւրում մատենագիր արքունի դպրոց (Փրա. 37), կը մնայ այդ ծառ ալութեան մէջ նաև Վոամշապհոյ իշխանութեան ատեն (Խոր. 134): Մաշթոց, որ և Մեսրոպա, արքունեաց մէջ չգտներ իւր սրտին լագուրդը, և Ներսէսի նախկին աշակերտը Ներսէսի որդւոյն մօտ կը դառնալ՝ իւր կեանքն ու աշխատութիւնը Աստուծոյ և եկեղեցւոյն նուիրելու նպատակով: Կորիւն մահուանէն 45 տարի առաջ եղած կըսէ այդ փոփոխութիւնը (Կոր. 29), որով կիւնալ այն 394 թուին, և

ըստ այսմ Մեսրովայ 5 տարի Խոսրովին ծառայելէն ետքը 5 տարի ալ Վոամշապոհին կը ծառալէ. որ լետոյ նոյն լաջողակութեամբ մէկը չգտներ Մեսրովին ըրածը կատարելու համար (Խոր. 134):

Մեսրովայ կրօնաւորութիւնը որչափ և միալնակցութեան և ճգնութեանց պտրագաներով պատմուած, պէտք չէ երբէք որ պարզ աղօթական կեանք մը կարծուի: Նո իւր նոր կեանքին սկիզբէն քարոզելու ձեռնարկեց և իրեն ասպարէզ ընտրեց Գողթն գաւառը և Սիւնեաց նահանգը, ուր տակաւին հեթանոսութեան հետքեր ալ կը մնալին: Շարիթ իշխան Գողթան և Վաղինակ նախարար Սիւնեաց օգնեցին և օգտուեցան Մեսրովայ առաքելական ջանքերէն: Մեսրովայ մեծ դէնքը աւետարանն էր, բայց աւետարանը ծանօթացնելու համար բերանացի թարգմանութենէ շատ միջոց չկար, քանի որ ժողովուրդը օտար լեզու չէր հասկանար, և անիկ լեզուով ոչ գիր կալր և ոչ գիրք և ոչ սուրբ գիրք. գժուարին կացութեան դարմանը կը տանձէ մեծ դպրապետին միտքը որ ժողովրդեան ծառայելու սկսելէն ետքը կզգալ ժողովրդական լեզուն գրի առնլու հարկը, ինչպէս կընէր երբեմն պաշտօնական շրջանակին մէջ: Կը զիմէ Սահակալ, որ հալրն էր կարօտ ժողովրդեան, և որ առաջին դիրքն ունէր երկրին գիտնականներուն մէջ: Ո՞ գիտէ քանի քանի անգամներ խորհրդակցեցան երկու երանելիներ անզիր ազգին խեղճութեան վրալ:

Խորհուրդներէ խօսակցութեան և խօսքերէ գործակցութեան անցքը բնական է, և հետզհետէ Մեսրովայ ճիգերը Սահակայ խորհուրդներով զօրացեալ իրականութեան կսկսին մօտենալ: Ծածկեալ կամ կորուսեալ գրութեանց լուրեր երևան կուգան (Փրա. 40), միւս կողմանէ թեթև զբաղմամբ մըն ալ կը համոզուին թէ զորդ գիւրին է գիւտ իրացդա (Փրա. 41): Եալիսկոպոսաց ժողովներ ալ կը գումարուին «հոգալ զգիւտ դպրութեան Հայոց» (Խոր. 134), և հարկ կը լինի ևս «զգացուցանել թագաւորին զպէտս ալսպիսի մեծ և կարևոր խնդրու» (Փրա. 41): Վերջապէս մտադրութիւն կը գրաւէ Սիջագետաց քաղաքներէն մէկուն եպիսկո-

պոս Դանիէլի մօտ գտնուած նշանագիրներու լուրը, զորմէ Հաբէլ վանականն ալ խօսած էր Վռամշապհով, Միջազնութք գտնուած միջոցին: Թագաւորական հրամանով Վահրիճ Խաղունի, հաւանաբար Խադ եպիսկոպոսի ազգականութենէն անձ մը, կը յղուի առ Հաբէլ: Վահրիճ և Հաբէլ կերթան առ Դանիէլ, կը գտնեն փնտուածը. Հաբէլ կը պատրաստէ, Վահրիճ ալ կը զննէ և կը սերտէ և կը բերէ: Վռամշապուհ և Սահակ Մեսրոպի կը լանձնեն. և Մեսրոպ կարեւոր նախապատրաստութիւններէ յետոյ ուսուցանելու կսկսի ալդ նշանագիրները: «Զամս սակաւո» (Խոր. 134), կամ «ամս երկուս» (Կոր. 9), ալդ աշխատութիւնը կը շարունակուի, այլ արդիւնքը կատարեալ գոհացում չտար, և նոր կատարելագործութիւն գտնելու համար Մեսրովպինքն ճանապար կելնէ Սահակէ որոշուած ընկերներով:

Մեսրովպ կերթալ նախ առ նոյն ինքն Դանիէլ ե. պիսկոպոս (Խոր. 136), անտի կանցնի Եղեսիա առ Պղատոն հեթանոս հռետոր, և կը պատուուի ևս տեղւոյն Բաբելաս կամ Ռաբուլաս եպիսկոպոսէն. կանցնի Ամիդ և տեղւոյն Ակակիոս եպիսկոպոսէն ալ պատիւ կը գտնէ: Պղատոնի և Ռաբուլասի խորհրդով Փիւնիկէ կերթալ Եպիփան հռետորին ետևէն, և անտի ի Սամոս (Խոր. 136), կամ լաւ ևս ի Սամուսատ (Կոր. 9), այլ Եպիփանու տեղ կը գտնէ նորա Հռուփանոս աշակերտը (Խոր. 136. Կոր. 10): Բոլոր ալս հետազննութեանց մէջ ձեռնունալն մնացած աղօթքի կտպաւինի, և մտաց երկնալին լուսաւորութեամբ կը լրացնէ աթութալից շարքը, և Հռուփանոսի ձեռնտուութեամբ ձերու վայելչութիւնը կը կազմէ:

Պատմութիւնը կը շարունակէ տակաւին նախնական աշխատութեանց պարագաները պատմել: Սահակ կը լուսաւորէ զՄաշթոց, գիւղահնար ճանապարհներ ցոյց կուտայ, գրոց կարգադրութիւնը և հեգենալից ուղղաձայնութիւնը կը սովորեցնէ: Սահակ ինքնին կընտրէ «արս բանիքունս և մտացիս ի քահանալիցն հայոց», իւր նախկին աշակերտաց մէջէն, և Մեսրովպի օգնական կուտայ: Մեսրովպ ալ ստէպ հարցումներով Սահակէ կընդունի «զաթութալիցն գաղափարը ըստ անսալթաքու-

թեան յունին», զի ոչ Մեսրովայ և ոչ իւր ընկերք կտրող չէին ուղղակի անօխալ բան մը վճարել առանց Սահակայ առաջնորդութեան (Փրա. 45—47),

Մեսրովայ դառնալէն լետոյ Սահակին ըրածները խիստ քննադատութեամբ աւելորդ կը գուռնալին, եթէ Մեսրովայ Սամուստի մէջ ունեցած լաջողութիւն կատարեալ լինէր: Ուստի ոմանք ամբողջ Մեսրովայ ուղեորութեանց մասը կեղակարծ դատեցին, ալլէ Մեսրովայ ուղեւրութեանց միջոցին գործածն ու գտածը լոյժ թերի նկատեցին, իսկ ալլը ևս Հուուփանոսի արհեստը լոկ գծագրական, իսկ Սահակայ աւելցուցածը քերականական դատեցին: Խնդիրը եկեղեցական նպատակէ դուրս լինելով, մատենադրական պատմութեան զննութեանց կը պատկանի հաւանականուգոյնը ցուցնել, ինչպէս շատեր ալ կը զբողին հայկական ալյըուբէնին բուն հիմը և իսկական ծագումը լուսաբանելու համար:

Գիրի գլւտին և գրականութեան ժամանակ կը կազմուի ոսկեղէն դարու երանտշնորհ Թարգմանչաց խորմը ըը Սահակայ և Մեսրովայ գլխաւուութեամբ: Բայց Սահակալ 60 և Մեսրովայ 40 աշակերտաց ըազմութիւնը գիրի գիւտէն առաջ ալ թարգմանչութեան պաշտօն կը վարէին, և իբր եկեղեցւոյ ուսեալ պաշտօնեալներ Ս. Գիրքի և Ս. Աւետարանի կտորները բերանացի թարգմանութեամբ կը ծանօթացնէին ժողովրդեան, և «ուր ոչ լինէին մերձ սուրբն Սահակ կամ մեծն Մեսրովանձամբ կամ իրենց աշակերտաց միջնորդութեամբ, հաւատացեալք ուչ կարէին իմանալ զվերծանութիւնն գրոց սրբոց և զրկեալ լինէին ի լուսաւոր պատուիրանացն աստուծոյ՝ ունալին ունկնդրութեամբ և զուր աշխատութեամբ» (Սահ. 8):

Երբ նորագիւտ գիրերու ուսուցումը կսկսէր, և Մեսրովայ իբր մեծ ռւսուցապետ գործոյն գլուխը կսնցնէր, վերոյիշեալ խումբէն ընտրելագոյններ Սահակալ ընտրութեամբ Մեսրովայ շուրջը գրաւոր թարգմանչաց նոր խումբ մը կսկսէին կազմել, և ասոնք են մերայիմ Թարգմանիչ անունով ճանչցածները: Նոցանունները պատմական պատահարաց շարքով հետզհետէպիսի լիշեմք: Առաջին չորսեր որ ալդ պաշտօնի կոչուե-

ցան՝ եղան. Յովհան Նկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Տիրալը Խորձենացի և Մուշէ Տարօնեցի, չորսն ալ արք բանիքունք և մտացիք ի քահանալիցն Հայոց, որք էին սակաւ մի մերձաւորեալք ի լուսական հեգենալսն» (Փրա. 46):

Ալդ մեծ եղելութեան թուականը 401, 405 և 406 տարիներուն մէջ կը պարունակուի. տարբեր ժամանակագրութեանց համեմատ: Աւելի լատնի է Կորիւնի վերջը կարդացուածը թէ Մեսրովպալ մահէն 35 տարի յառաջ էր (Կոր. 29), որով կը լինի $439 - 35 = 404$, Բայց նոյն տեղ առաջին Յազկերտի 8.րդ տարին ալ լիշուած լինելով կը լինի $399 + 7 = 406$, և յայտնի չէ թէ երկու ասացուածներէն որուն աւելի որժ տալու է. կամ թէ 404 է 406 տարբերութիւնը երկամեալ թերի փորձերուն (Կոր. 9) միջոցը չէ արդեօք: Նոյն գիրքին մէջ Մեսրովպալ ուղևորութեանց սկիզբը կը դրուի Վռամշապհոյ ճ-րդ տարին և յաջողութեամբ դարձը Վռամշապհոյ ճ-րդ տարին (Կոր. 9. 10), բայց ալդ թուականը ուղիղ չերեւիր: Նոյն որ Վռամշապհոյ ճ րդ տարին յառաջ ալ լիշուած է իբր Վահրիճի երթալուն թուական (Կոր. 9), և «ամս երկուս» տշխատուելէն յետոյ տակաւին Վռամշապհոյ ճ-րդ տարին չկրնար լինել: Միւս կողմանէ նոյն Կորիւնի գրածով (Կոր. 29), Մեսրովպալ կրօնաւորութիւնը մահուանէ 45 տարի յառաջ լինելով, կրօնաւորութեան և գիրի գիւտին մէջ 10 տարի միջոց պիտի լինի: Արդ ստոլգ է թէ Մեսրովպ ծառալեց Վռամշապհոյ իբր էրագիր (Խոր. 134), ստոլգ է թէ Խոսրովու ժամանակ ալդ պաշտօնը ստանձնեց (Փրա. 37), և եթէ գիրի գիւտը Վռամշապհոյ ճ րդ տարին լինէր, Մեսրովպ 10 տարի յառաջ կրօնաւորած լինելով, ոչ Վռամշապհոյ ծառալած կը լինէր և ոչ Խոսրովու, և Խոսրովէ առաջ արքունիքէ հեռացած պիտի մինէր:

Ուրիշ հաշուով մը, Վռամշապհոյ դանիէլեան նշանագիրներու լուրը առած է Միջագետք եղած ատեն, (Խոր. 134), իսկ Միջագետք գացած է երբ Արկադիոսի ժամանակ շշիոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց և զօրքն ընդ միմեանս պատերազմէին», երբ և

ցաղագս մեծին Յովհաննուա, ալսինքն Ոսկեբերանին համար խոռվութիւնք ելած էին (Խոր. 132): Արդ այս շփոթութիւնք սկսան 402-ին յունազգի և գոթացի զօրավարաց մէջ, և 403-ին Ոսկեբերանը աքսորելու փորձ եղաւ և խափանուեցաւ, իսկ 404-ին գործադրուեցաւ: Վոամշապհոյ Միջագետք երթալլ ամենայն հոււանութեամբ եղած կը լինի 403-ին վերջերը: Արդ եթէ գիրի գիւտին բուն թուական դանիէլեան նշանագիրներուն յայտնուէլը պիտի ընդունեմք, եթէ իբր երկամեալ փորձը հաշիւկ պիտի առնումք և անկէ ետքը պիտի գընեմք Մեսրոպակալ ուղեորութիւնը, և եթէ Սահակայ գլխաւորութեամբ կատարուած վերջնական աշխատութիւնն ալ իբրև գիրի գիւտին լրումը պիտի նկատեմք, յարմարագոյն է 404 թուականը ընդունել իբր Վահրին երթալուն և առաջին նշանագիրները բերելուն տարին և 406 թուականը առնուլ իբր գործոյն վերջնական աւարտման թուական:

4 Ոսկեղէն դարու արդինք

Գիրի գիւտէն մինչեւ 415 տակաւին կը շարունակէ երկրին խաղաղութիւնը և այս տասնամեալ հանդարտութեան միջոցին Վասմշապուհ և Սահակ և Մեսրոպակ համամիտ գործակցութեամբ մեր ազգալին դպրութեանց ոսկեդարուն հիմերը կը գնեն: Սաաջին գործն է երկրին ամեն կողմերը հայ գրութեան դպրոցներ բանալ, որպէս զի ազգն ազատի ասորական խաղտախաւղտ կոշտութենէն և լունական ծեքածոռ ծեթևեթէն (Սահ. 11): Հարկաւ վերոյիշեալ Սահակ-Մեսրոպեան հարիւրէն էին իւրաքանչիւր վիճակի կամ գաւառի մէջ դրուած ուսուցիչները, և ի հարկէ մեծագոյն հոգը դիխաւոր կեդրոններուն վրայ կը տարուէր, քանի որ ինքն Սահակ ալ յատուկ մտադրութիւն դարձուցած էր իւր սիրելի Մամիկոնեաններուն, և համբէն գիր սորվող ազատորդի երիտասարդաց առաջնոյն Վարդան անուն էր (Կոր. 14), նոյն ինքն Սահակայ թոռնիկը և ապագայ Աւարի առաջինեաց զօրագլուխը:

Գիր գտնելու մեծ շարժառիթը սուրբ գիրքն էր,

և սուրբ գրոց թարգմանութեան պէտք էլ ձեռնարկել: Մեսրովպի և իւր օգնականներ չէին համարձակիր. «ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի լունարէն ուսման» (Փրկ. 48): Միաբան կը դիմեն թագաւորին, և ան ալ մէկտեղ առնլով և նախարարներէն ալ ներկալացուցիչներ ունենալով կը յալտնեն Սահակար, թէ ինքն պէտք է ալս գործը ստանձնէ, որով հաւասար Լուսաւորչին երախտաւոր պիտի ըլլալ ազգին: Հաճեցաւ Սահակ և «անվեհեր ջանալով զցալու և զցերեկ թարգմանեաց զկտակարանս ամենալն», և օգնական թարգմանիչներու և գրագիրներու ձեռօք սկսան Ս. գիրքի օրինակներ շատնալ և տարածուել և գործածուիլ, և ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց հաւատուող հաւատացեալք հոգեոր խնդութեամբ լեցուիլ, և մինչեւ իսկ ի հրապարակս և ի փողոցս և առտնին ամենուն բերանը սկսան հնչել սաղմոսներ և կցորդներ (Փրկ. 47—53):

Ս. Գրոց թարգմանութիւնը տարբել կերպով պատմուած է ալլուր (Խոր. 138), իբր զի Մեսրովպ Սամուատի մէջ անմիջապէս թարգմանած է Առակաց գիրքը և Հռոմանոսի գրել տուած, և յետոյ հին կտակարանի 22 նսխականունները և նոր կտակարանն ալ ալնտեղ Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի թարգմանիչներու օգնութեամբ թարգմանած, և հայ գիրերը և հայ սուրբ գիրքերը ի միասին ներկալացուցած Վուածշապհոյ և Սահակալ: Ուրիշ տեղ ալ (Կոր. 12) կըսուի թէ միայն Առակը Սամուսատի մէջ թարգմանեց Մեսրոպ և գիրերու հետ բերաւ Վաղարշապատ առանց ամբողջ կտակարաններու թարգմանութիւնը լիշելու: Սակայն ոչ միայն մեր առաջին պատմածը Փարպեցւոն համեմատ աւելի ընդունելի է, ալլ և Խորենացին ինքն ինքեան կը հակասէ երբ Մեսրովպալ ամբողջ Ս. Գիրքը թարգմանել տալէ ետքը տակաւին Սահակը Ս. Գրոց թարգմանութեամբ զբաղեալ կը ցուցնէ (Խոր. 140): Նոյնպէս անընդունելի է Խորենացւու լիշած միւս պարագայն թէ հայերէն Ս. Գիրքը ասորերէնէ թարգմանուեցաւ, ուրացող Մեհրուժանի ժամանակէն ետքը Հալոց մէջ յունարէն գիրք մնացած չլինելուն համար

(Խոր. 140): Ոչ միայն Փարպեցի լունարէնէ. թարգմանուիլը յայտնապէս կը ցուցնէ (Փրագ. 48), ալլ և ցարդձեռութենիս եղած աստուածաշունչը կը հաստատէ, թէ մեր թարգմանութիւնը Եօթանասնից կոչուած լունական օրինակին վրալ եղած է, և ոչ թէ Բէշիթը կոչուած ասորական օրինակին վրալ, որ համանման է երբալական բնագրին և ուղղակի անկէ բղխած: Փիլոքսենեան կոչուած ասորական թարգմանութիւնը որ Եօթանասնից օրինակին վրալ յօրինուած է, մեր հայերէն աստուածաշունչն հարիւր տարի ետքը թարգմանուեցաւ Պօղիկարպոս քորեպիսկոպոսէն (Vigouroult S. 203): Սաոյդէ որ մեր աստուածաշունչին, և մանաւանդ նոր կտակարանին մէջ ինչ ինչ ասորական հետքեր կը տեսնուին աստ և անդ, սակայն ասոնք չեն բաւեր ասորերէնէ թարգմանութիւն լինելը հաստատել, լոյժ մասնակի նշաններ լինելով, ալլ միայն կը հաւաստեն թէ մեր թարգմանիչք ասորերէնի հմուտ և ասորական օրինակին ծանօթ լինելով կրցան երբեմն ինչ ինչ բառեր կամ բացատրութիւններ կամ դարձուածներ ասորերէնէ փոխ առնուլ կամ ասորերէնի ոճով կազմել:

Ս. Գրոց թարգմանութենէ ետքը եկեղեցական պաշտամունք կը պահանջէին ծխսական կարգադրութիւններ, Թերեւս ասոնք են ւեկեղեցական գրոց գումարութիւնն, զորոց կը գրուի թէ Սահակ Փի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ էր. (Կոր. 21. Սոփ. 17): Սահակայ յատուկ պատարագամատոլց մը լիշուած է ուրեք (Յուշիկք Ա. 329), ալլ այն օտարութի և նոր գործ մը կերեւի. այսու հանդերձ ալժմեան պատարագամատոլցի կազմութիւնն ալ պէտք է Սահակի վերագրել: Ժամագիրքի ճակատը Սահակայ անունը կը կարգացուի մինչև ցայսօր, և Օձնեցին նմին կը վերագրէ կանոնի քարոզները և աղօթքները (Օձն. 31), բայց հարկաւ ուրիշ մասեր ալ ունի: Նարականներէն աւագշաբաթու կարգը ամբողջ՝ Տաթևացին Ս. Սահակի կուտալ (Տաթ. 637), ալլ ոճն ու կազմութիւն չեն նպաստեր ալդ կարծեաց, կամ թէ շատ քիչ բան հնար է Սահակի վերագրել:

Ծխսական կարգերուն անցնելով, ոմանք ձեռնա-

դրութիւնը 410-ին պատրաստուած կըսեն, աշխարհա-
թաղը 513ին, քահանալամաղը և հոգեհանգիստը քիչ
ետքը, սերմնօրնէքը 423-ին (Յուշիկը Ա. 327—328),
սակայն ճշտութեամբ փաստ մը չունիմք ձեռուլնիս,
միայն թէ առհասարակ խորհրդակատարութեանց կար-
գերը, մկրտութեան և դրոշմի, նշանի և պսակի, և ալ-
նոյնպիսի կարեւորագոյն կարգերը կամ Սահակայ ձեռօք
կամ Սահակայ հեղինակովթեամբ պատրաստուեցան:

Կանոնագրոց մէջ Սահակայ անուամբ քանի մը
կարեւոր օրէնքներ կան, որք ազգալին կանոնաց իբր
հնագոյն մասեր պէտք է ընդունուին: Ալսպէս են. Յա-
ղագս եպիսկոպոսաց կանոնք 7, Յաղագս քորեպիսկոպո-
սաց կանոնք 13, Կարգ քահանալից կանոնք 23, Կարգ
վանաց կանոնք 8, Վասն գանձուց եկեղեցւոյ կանոնք
12, Յաղագս պտղոց ժողովրդականաց կանոնք 8: Ալդ
կանոնաց վերլուծութիւնը զանց կընեմք, միայն կըսեմք
որ եթէ Սահակեան կանոնաց ճշտութեան դառնալինք,
շատ և շատ անկորդութիւններ ինքնին կը վերնալին:
Նաև կանոնք Ս. Գրիգորի Լուսաւորչի և Կանոնք Ս.
Թադէի առաքելոյ մակագրեալները, Հարկաւ Սահակայ
ձեռօք ձեւակերպուեցան, զի իւր անուամբ եղած կա-
նոններն ալ Լուսաւորչաւ աւանդութեամբ և հեղինա-
կութեամբ կազմած է: «Եւ զբաղումս և զհայրասետա-
ցըն սըբոց ճշմարտապատում իմաստութիւնս յօրինեալ
ի հայ լեզու... և շատ ևս ալլ մեկնութիւնս գրոց սըբ-
բոց թարգմանէր ըստ Հայերէն նշանագրաց (Սոփ. 17
— 18): Ալդ կտորն ալ յոյն սուրբ Հարց գիրքերուն
թարգմանութեան կակնարկէ, որպիսիք բաւական թու-
ով հասած են մինչեւ ցմեզ: Սակայն Հարկաւ ամենքն
ալ միայնոյ Սահակայ չկմք կարող տալ, միայն թէ
պէտք է ճանչնալ թէ աշակերտաց և գործակցաց ձե-
ռօք գրական աշխատութիւններ կատարել տուած ատեն,
գործոյն գլուխն և ուղղիչը ինքն էր, և մեծ փառքը
միշտ իրեն կը պատկանի:

Գիրի գիւտէն ետքը միջոց մը, ինչպէս ըսինք,
իսաղաղական արդիւնաւորութենէ լետոյ կը վախճանէր
Վոամշապուհ խաղաղութեամբ և խնդութեամբ, իւր
իշխանութեան ժամանակը անմոռաց լիշտակ թողլով

յեանոց։ Վոամշապուհի իշխանութեան տևողութիւնը 21 տարի կը դրուի սովորաբար (Խոր. 140), սակալն մեք 5 տարի ևս կուզեմք յաւելուլ այդ հաշուոյն Փարպեցոյն երկու խօսքերը իրարու մերձեցնելով։ Նախ Մեսրոպայ կրօնաւորիլը իշելով կը գըէ. «Մինչև յամս հինգերորդ Վոամշապհոյ» (Փրագ. 18), և գիրի պատմութիւնը աւարտած ատեն կը յաւելու. «Եկաց լեռաւ ս ս ր ի կ թագաւորն Վոամշապուհ ամս քսան և մի» (Փրագ. 54). որով վերջին 21 տարիներ առաջին 5 տարիներէն զատ համըռուած կերևին, և Վոամշապուհ մեռած կը լինի իւր 26 րդ տարին։ Ալդպիսի մի յաւելուած մնձապէս կը նպաստէ ժամանակագրական յարմարութեանց, մէկ կողմանէ եղելութիւնները կը շարուկարգէ կշիռ համաձայնութեան վրայ, և միւս կողմանէ կազատէ պատմութիւնը մերթ ընդ մերթ ընդհատ անիշխանութիւններ ենթադրելէ, ինչպէս որ պարտաւորեալ են ընել ժամանակագրութեան ոշխատողներ դիպուածները կշիռ պահելու համար։ Վոամշապուհ իւր 26-րդ տարին վախճանած լինելով 389 է մինչև 414 թագաւորած կլինի։ Պատմութիւնն ալ զինքը կը ճանչնալ իբր «Հասեալ ի լերկար ծերութիւն» (Փրագ. 54), և գոնէ 75 տարեկան եղած ըսելու եմք։

5 Յունական քաժնին մէջ։

Վոամշապուհի յաջորդն եղաւ իւր նախորդն ու եղբայրն Խոսրով. որ կը գտնուէր ի Պարսկաստան բանտարկութենէ ազատած, կամ 390-ին Սահակալ ձեռօք կամ անկէ ետքը Վոամշապհոյ միջնորդութեամբ, բայց միշտ արգելական ներքին գաւառաց մէջ։ Հայեր խընդըեցին ծերունի Խոսրովը, զի Վոամշապուհ միալն 10 տարեկան տղալ մը թողած էր Արտաշէս անունով և Արշակունեաց մէջ ուրիշ յարմար անձ չկալր. Սահակայ գլխաւորութեամբ պատգամաւորութիւն մը գնաց առ Յազկերտ։ Սահակ իւր նախկին բարերարին բարիք մը ընելու և երկիրն օտարի ձեռք չժողովու զգացումներէն փառեալ էր. Յազկերտ գժուարութիւն չզգաց Հայերը գոհացնել և ուղիծ ծեր» Խոսրովը վերստին թագաւորեց-.

նել։ Այլ սա 8 ամին միայն ապրեցաւ և կարծես թէ միայն փառօք գերեզման իշխելու համար վերստին գահ ելաւ (Փրա. 55, Խոր 142)։

Խոսրովու մահուամբ միայն 11 տարեկան Սրտաշէսը մնաց մէջտեղ Սրշահունի տոհմէն, և Յազկերտ տոփիթ գտաւ կանուխ լրացեալ խորհուրդ մը իշագործել, և իւր Շապուհ որդին Հալոց վրայ թագաւորեցնել և բնիկ հայ հարստութիւնը խափանել։ Հարկաւ պարսիկ պաշտօնէից բազմութիւն մըն ալ լիցուց հայ արքունիքը, զի բոլորովին խակ երիտասարդ մը կերևի Շապուհ։ Յազկերտի նպատակն էր արքունական շքով և մեղմօրինակ ընթացքով ընտելացնել Հալերը պարսիկ ոգուոյն և դենին և հեռացնել յունական հոգիէն և քրիստոնէական եռանդէն։

Բոլորովին հակառակն էր Սահակալ սիրտն ու հոգին, և պէտք էր անհնարին տագնասլ կրէր նորօրինակ կացութենէն, և հաւանական է որ թեթևաբարոյ նախարարաց ալ ծանր չժուեցաւ ի սկզբան Շապուհի թագաւորութիւնը, մինչ ամեն շողմարար փաղաքշանք ալ կը կատարէին ազատուիրոյն համակրութիւնը գրաւելու։ Ալդ դժուարութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն ալ յունական բաժնին մէջ հայ դպրութիւն մուժանելու փափաքը լորդորեցին Սահակ հալրապետը Պարսից բաժնը թողուլ և Վարդան թոռը և Մեսրովպ գործակիցը և աշակերտաց խումբ մը Անոնդ Վանանդեցւոյն գլխաւորութեամբ ի միասին առնլով անցնել յունական բաժինը (Խոր. 148)։

Վաամշապհոյ մահը 414, և Խոսրովու մահը 415 դնելով, և Շապուհի թագաւորելն ալ անմիջական կարգադրութիւն մը նկատելով, անտի իբր տարի կամ տարի ուկէս ետքը 417 ին կը դնեմք մեք Սահակալ ուղևորութիւնը։ Ոմանք աւելի անագան Յազկերտի մահուանէ յետոյ 420-ին կուզեն զնել Սահակալ երթը, բայց որովհետեւ Վոամայ երկրորդ տարին արդէն Սահակ դարձած է և Սրտաշէսը թագաւորեցնելու կաշխատի, և Սահակալ ուղեւորութեանց, պատգամաւորութեանց, յաջողութեանց, աշխատութեանց և արդիւնաւորութեանց համար շատ նեղ է հազիւ տարւոյ մը միջոցը, անոր

համար հարկ է ուղևորութիւնը կանխել և գոնէ երեք տարի Սահակը յունական բաժնին մէջ մնացած ըսել:

Զէ դրուած թէ ում յանձնեց Սահակ աթուով հոգածութիւնը երբ անտի հեռացաւ, զի Մեսրովպան ալ ի միասին տարած էր. ալլ օրովհետեւ նա հեռու տեղ չէր և իւր սեփական վիճակէն ալ դուրս ելած չէր. և շարունակեալ յարաբերութիւնք անխափան կը մնային, կը նամք ըսել թէ յատուկ տեղակալի ալ պէտք չունէր: Արդէն իւր փեսայն Համազասպը սպարապետութեան պաշտօնովը նախարարական խումբին պետը կը նկատուէր:

Հեթանոս պետութեան ընթացքէն ցաւած և քրիստոնեայ պետութեան վրայ յուսալից սահմանագլուխը անցած ատեն, մեծ յուսախարութեան հանդիպեցաւ Սահակ: Արդէն Արկադիոսի մահուանէ յետոյ 408-ին, թէոդոս Փոքը եօթնամեալ մանկան խնամակալը Անթեմիոս փափոխէր էր երկկողմանի հարկատուութեան ոճը և յունական բաժինը Վաամշապուհէ հանելով յանձներ էր կուսակալ կոմսի մը (Խօր. 138): Այս պատճառով կաթուղիկոսի իշխանութիւնն ալ սկսեր էր անարգուիլ, և յունական բաժնին գաւառներ կը նկատէին իբր պիճակեալ յոթուուն Կեսարուա: Յունականութիւնը՝ թէ քաղաքական և թէ կրօնական գործոց մէջ զօրացնելու ջանք կը լինէր, հայ դպրութիւնն ալ չէր ներուած, և այս ամենը նոյն իսկ Սահակալ դէմ սկսան պնդել տեղական իշխանութիւնք: Անատոլիոս Պոնտական սահմանաց ընդհանուր բգեշիը պարզ քաղաքավարութիւն միայն ցոյց տուաւ Սահակալ, վարչական ընթացքը ըբփոխեց ամեննեին: Սահակ պարտաւորուեցաւ Բիւզանդիոն դիմում ընել, և Մեսրոպալ և Վարդանալ ձեռք առ կայսրն թէոդոս և առ պատրիարքն Ատակիոս ուղղեալ թուղթեր յանձնեց ու լիեց առ Անատոլիոս: Այլ պատգամաւորներ արգելուեցան երթալ ի Կոստանդնուպոլիս, մինչև որ Անատոլիոս մարաքաղաքէն գրաւոր հրահանգ ընդունեցաւ և Դերջանու Գնիթ եպիսկոպոսն ալ ուղեկից տալով զիրենք ճանպալ դրաւ: Կեռնդ և իւր ընկերակիցք հիւր մնացին Մելիտինոյ Ակակ եպիսկոպոսին մօտ, իսկ Սահակ գործելէ խափանեալ

հիւր մնաց հաւանաբար Անատոլիոս բդեշիսին կամ թէ Կեսարիու արքեպիսկոպոսին, որ այն ատեն Փիլիմոս էր լաջորդ Նելլադիոսի լաջորդին Բարսղի:

Թէոդոս Փոքը հազիւ 16 տարեկան էր տակաւին, և կալսերութեան խնամակալն էր իւր քոյրն Պուղերիս, ուխտեալ կոյս մը. տակաւին ծաղկահասակ և բոլորովին բարեպաշտական կենաց նուիրեալ: Եկեղեցական պատգամաւոր մը, եկեղեցւոյ վիշտերը, երկնալին ալցելութեան նշանը, հեթանոսաց ընթացքը. և Մեսրովպայ արժանիքը լաւ տպաւորութիւն գործեցին արքունեաց վրայ. պետական խորհրդականք ալ մտածեցին հարկաւ թէ Հայոց համակրութիւնը շահելով հնար է իրենց բաժինը ընդարձակել, ինչ որ դժուար էր զինուորական զօրութեամբ լաջողցնել:

Պատգամաւորք ձմեռը Բիւզանդիա անցուցին և զատիկը ընելէ ետքը (Կոր. 17), որ է 418 տարւոյ զատիկը, կալսերական և պատրիարքական հրամանագիրերով գարձան առ Անատոլիոս: Ահակայ իշխանութիւնը ճանչուած էր յունական բաժնին վրայ իբր առանձին եկեղեցական նահանգ Կեսարիու վիճակէն տարբեր, ներուած էր որ իրենց բնիկ լեզուով և գրով կարող լինին իրենց եկեղեցիները վարել, հրամակուած էր որ կալսերական ծախքով հաւերէն դպրութեան վարժարաններ բացուին, այնպէս որ «առին զոր յուսալին և զոր ոչն յուսալին» (Խոր. 152): Երկնալին լատուկ շնորհ մըն ալ այդ լաջողութիւնը եղաւ: Փոխանակեալ նամակները կը տեսնուին Խորենացւոյն մէջ, թէպէտ վաւերականութեան վրայ ներեալ է երկրալութիւն ունենալ: Գիրի գիւտին համար Բիւզանդիա չգիմելնուն կամ Ոսկերերանի հետ չխորհրդակցելնուն կամ Ասորիներու դիմած ըլլալնուն համար գրուած մեղադրանքներ տեղի չունեցող խօսքեր են: Զարմանալի է միայն որ Հոռվմայ Վատիկանեան մեծ մատենադարանին մէջ, զանազան ալբուրէնից գտիչներուն կարգին նկարուած է Ոսկերերանն ալ ձեռքը հաւերէն ալբուրենով, բայց սրահն ալ նկարն ալ ժաման գործեր են, և նշանակութիւն չեն կրնար ունենալ:

Բիւզանդիու ըրած շնորհներուն մէջ կայ Վարդա-

նի տրուած ստրատելատութեան աստիճանը, որ պէտք է ըլլալ յունական բաժնին նախարարական գունդերուն վերին հրամանատարութիւնը: Մեսրոպի ալ Եկղեոիաստիկոսի (Խոր. 156) կամ Ակումիտի (Կոր. 16) աստիճանը տրուեցաւ. որ կրնայ համաձայնիլ դեռ ևս Յունաց եկեղեցւոյն սովորական Արքիմանդրիտի աստիճանին, զոր կուտան բարձրաստիճան և ուսումնական վանականց, նման մեր ալժմեան վարդապետութեան աստիճանին, որոյ սկիզբն ալ Մեսրոպակէ եղած գիտեմք, և Վարդապետ անունով կոչուած է միշտ Մեսրոպ մեր մէջ, և միւս յունական կոչումներ երբէք կիրառութեան մտած չեն: Կայսերական կարգադրութեանց մէջ կայլ նաև յատուկ ամուր քաղաք մը կառուցանելու հրամանը. և Անատոլիոսի ընտրութեամք շինուեցաւ Կորնոյ քաղաքը Թէոդուլովիս անունով (Խոր. 158), որ է ալժմեան էրզրումը:

Սահակալ գործունէութեան դառնալով, արդիւնքն ալ մեծ եղած յաջողութեան համեմատ Անատոլիոս ստացած հրամաններուն համեմատ ամեն դիւրութիւն ընծալեց: Սահակալ հովուական պաշտաման պէտքերը կարգագրելու և դրամական միջոցներ ալ հալթալթեց ուսումնական վիճակը բարձրացնելու, նորագիւտ հայ դպրութեան վարժարաններ բանալու և ուսումը զարգացնելու (Սոփ. 14):

*
* *

(Մնացեալը յաջորդ անդամ)

